Unofficial Translation

# DECISION
## of the National Assembly of the Republic of Armenia

### ON THE ANNOUNCEMENT OF THE AMNESTY DEDICATED TO THE 7TH ANNIVERSARY OF THE PROCLAMATION OF THE INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

Following the discussion of the proposal submitted by the President of the Republic of Armenia in connection with the 7th anniversary of the proclamation of the independence of the Republic of Armenia, guided by the principle of humanity and (in accordance with) Point 1 of Para 1 of Article 81 of the Constitution of the Republic of Armenia, the National Assembly of the Republic of Armenia decides:

1. To discharge from the serving sentence:

a) the persons, who

- were convicted to deprivation of liberty for up to three years;
- were convicted to serve the sentences not connected with deprivation of liberty;
- were convicted to the conditional deprivation of liberty with the compulsory labor enrollment or were conditionally discharged from the places of deprivation of liberty with the compulsory labor enrollment;

b) the persons convicted to deprivation of liberty for up to five years, who:

- have participated in the World War II, military actions directed at the defense of the Republic of Armenia, in the order established by the legislation of the Republic of Armenia obtained equal to them status, have the status of incarcerated (forcefully convicted) and have not been convicted to the sentence in the form of deprivation of liberty in the past for committing intentional crime;
- are disabled of the first or second group;
- are women, or men of age 60 and over;
- committed crime before turning 18 years old and have not served a sentence in places of deprivation of liberty in the past;
- were convicted for committing negligent crime, excluding those, who were convicted under the Part 3 of Article 173 and those, who were convicted under Article 260 of the Criminal Code of the Republic of Armenia, whose acts caused the death of several people;
- are spouse, child, parent, or sibling of the persons killed in the military actions directed at the defense of the Republic of Armenia as well as persons, who obtained equal to them status through the procedure stipulated by the legislation of the Republic of Armenia.

2. To cancel the cases under the proceedings of the bodies of preliminary investigation, investigation as well as the cases brought in court, but with no court proceedings started, against the persons, who committed crimes, for which statute establishes deprivation of liberty for up to three years or sentence not connected with deprivation of liberty, as well as the cases against the persons, mentioned in sub-point "b" of the point 1 of this decision, who committed crimes, for which the statute establishes deprivation of liberty for up to five years.
3. To abate by half the part of the sentence not served:
    a) towards the military servants of the ordinary military drafting, who were convicted to deprivation of liberty for up to five years and has not served sentence in places of deprivation of liberty in the past;
    b) towards the persons convicted to deprivation of liberty for more than 5 years, who:
    - have participated in the World War II, military actions directed at the defense of the Republic of Armenia, in the order established by the legislation of the Republic of Armenia obtained equal to them status, have the status of incarcerated (forcefully convicted) and have not been convicted to the sentence in the form of deprivation of liberty in the past for committing intentional crime;
    - are disabled of the first or second group;
    - are women, or men of age 60 and over;
    - committed crime before turning 18 years old and have not served the sentence in places of deprivation of liberty in the past;
    - were convicted for committing negligent crime (deed), excluding those, who were convicted under the Part 3 of Article 173 and those, who were convicted under the Article 260 of the Criminal Code of the Republic of Armenia, whose deed resulted (caused) the death of several people;
    - are spouse, child, parent, or sibling of the persons killed in the military actions directed at the defense of the Republic of Armenia as well as persons, who obtained equal to them status in order established by the legislation of the Republic of Armenia.
    c) towards the persons convicted to deprivation of liberty who have served half of the term of the sentence they have been convicted to.
4. To abate part of the sentence not served:
    a) by one third – towards the persons convicted to deprivation of liberty, who have served one third part of the term of the sentence;
    b) by one fourth – towards the persons convicted to deprivation of liberty, who are not covered by the points 1, 3 and sub-point "a" of the point 4 of this decision.
5. Amnesty shall not be executed towards:
    a) the persons, who committed crimes stated in Article $49^1$ of the Criminal Code of the Republic of Armenia and persons stated in the same Article, as well as the persons who committed crimes or were convicted for the commitment of the crimes defined by the second part of Article $73^1$, Article 82, the third and fourth part of Article 86, the first part of Article 88, the third and fourth part of Article 89, the third and fourth part of Article 90, the second and third part of

Article 94, the first, second and third part of Article 112, Articles $112^1$, 115, the second part of Article 116, Articles $119^2$, 133, $133^1$, $133^2$, 134, $134^1$, 185, $185^1$, 190, the second part of Article 203, the third part of Article $229^2$, the first and second part of Article $232^1$, the point "b" of Article 248, Article 257, points "c" and "d" of Article $259^1$, points "b" and "c" of Article 268 of the Criminal Code of the Republic of Armenia, excluding those convicts, who were conditionally discharged from the places of deprivation of liberty with the compulsory labor enrollment prior to January 13, 1997;

b) the persons, whose sentence was abated or who were discharged from serving the sentence by decrees of the President of Armenia on pardon, or by the laws of the Republic of Armenia "On amnesty dedicated to the adoption of declaration of independence of the Republic of Armenia from November 27, 1990, "On amnesty dedicated to the anniversary of the adoption of declaration of independence of the Republic of Armenia" from October 5, 1992, by the decisions of the National Assembly of the Republic of Armenia "On announcement of the amnesty connected with the adoption of the Constitution of the Republic of Armenia" from September 26, 1995, "On announcement of the amnesty" from April 10, 1997 and once again committed an intentional crime;
c) the persons, who were in large prior to the date of the enforcement of this decision;
d) the persons, who evaded the regular military call-up for the military service, left the military unit or place of military service without permission and the absence prolonged for more than one month (Article 57 and point "c" of Article 254 of the Criminal Code of the Republic of Armenia) and within two months after the publication of this decision have not turned themselves in to the law-enforcement bodies of the Republic of Armenia;
e) the persons, who were serving sentence in the prison by the decision of the court for the intentional violation of the regime in places of deprivation of liberty;
f) the persons who committed several crimes, if even one of these crimes is not subject to the amnesty under this decision;
g) the persons, who were convicted by the courts of other states.

6. This decision does not discharge from the additional sentences set by the courts' verdicts, excluding internal exile, deportation, as well as confiscation of the property, if the confiscation has not been executed from the moment of the publication of this decision;
7. Amnesty is executed after the completion of the relevant course of the medical treatment towards the persons, who undergo medical treatment from chronic alcoholism, narcotics and venereal diseases in the compulsory order in places of deprivation of liberty.

   Execution of the amnesty is postponed until the completion of the court proceedings towards the persons suffering from chronic alcoholism, narcotics and venereal diseases, if the cases concerning them have not been examined in the court.

8. The decision is executed on the basis of the articles which are currently in force for those persons serving sentence in places of deprivation of liberty, who were convicted for the commitment of the crimes previously defined by the articles of the Criminal Code of the Republic Armenia but which were repealed by the laws of the Republic of Armenia prior to the publication of this decision and who are liable for the same deeds in accordance with the newly defined articles of the Criminal Code of the Republic of Armenia.
9. This decision shall be executed by:
   a) courts
   - towards the persons, whose cases or materials are in the court, but they haven't been examined until the enforcement of this decision or, for those persons whose court cases have been examined, but the verdicts have not entered into legal effect;
   - towards persons who are conditionally convicted or the persons, concerning whom the execution of the verdict have been suspended. as well as persons who have been released from prison on parole;
   - towards the persons who have been convicted with verdicts that do not envisage deprivation of liberty, excluding persons who have been sentenced to corrective labor;
   b) court of appeal of the Republic of Armenia:
   - towards persons who serve the penalty outside the boarders of the Republic of Armenia;
   c) bodies that are conducting investigation and preliminary investigation:
   - towards the persons whose cases and materials are investigated by the above mentioned bodies;
   d) chiefs of corrective labor institutions:
   - towards those convicts who serve sentences in places of deprivation of liberty:
   e) chiefs of internal affairs' regional bodies of the Ministry of Internal Affairs and National Security:
   - towards those persons who have been convicted to corrective labor;
   - towards those persons who have been conditionally sentenced to imprisonment with compulsory labor involvement or, who have been released from places of deprivation of liberty on parole with compulsory labor involvement;
   f) commanders of disciplinary battalions:
   - towards those persons who serve their sentences at the disciplinary battalions;
10. Decision on executing amnesty made by investigation and preliminary investigation conducting bodies, chiefs of corrective labor institutions, chiefs of internal affairs' regional bodies of the Ministry of Internal Affairs and National Security and commanders of disciplinary battalions shall be approved by the Prosecutor.

    In cases when the court executes the decision on amnesty, the participation of the Prosecutor is mandatory.
11. This Decision is applied towards those persons who have committed crimes before and including September 14th, 1999.

12. Points 1.2 and 3 apply towards those persons who have been recognized disabled of the first or second group before and including the last day before this decision was adopted or towards the persons, who reach their 60 years before and including the date when the execution of this decision has expired.
13. Execution of the amnesty does not abolish the criminal record.
14. The decision enters into force on the date of its promulgation and is subject to the execution before December 14, 1999.

Speaker of the National Assembly
of the Republic of Armenia

Kh. Haroutounian

September 15, 1998
N-288-1
Yerevan

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 7-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 7-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությունը, առաջնորդվելով մարդասիրական սկզբունքներով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81 հոդվածի առաջին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

1. Պատիժը կրելուց ազատել՝

ա) այն անձանց, ովքեր՝

— դատապարտվել են ազատազրկման մինչև երեք տարի ժամանակով,

— դատապարտվել են ազատազրկման հետ չկապված պատիժների,

— դատապարտվել են ազատազրկման պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավմամբ կամ ազատազրկման վայրերից ազատվել են պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավմամբ.

բ) մինչև հինգ տարի ժամանակով ազատազրկման դատապարտված այն անձանց, ովքեր՝

— Հայրենական մեծ պատերազմի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավասարեցված են նրանց, ունեն բռնադատվածի կարգավիճակ և դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով նախկինում պատիժ չեն կրել,

— առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներ են,

— կանայք են կամ 60 տարին լրացած տղամարդիկ,

— հանցագործությունը կատարել են մինչև 18 տարեկան դառնալը և ազատազրկման վայրերում նախկինում պատիժ չեն կրել,

— դատապարտվել են անզգույշ հանցագործություն կատարելու համար, բացի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 173 հոդվածի երրորդ մասով դատապարտվածներից և 260 հոդվածով դատապարտված այն անձանցից, որոնց արարքի հետևանքով առաջացել է մի քանի անձի մահ,

— Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ամուսին, զավակ, ծնող, քույր կամ եղբայր են։

2. Կարճել այն անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ հետաքննության, նախաքննության մարմինների, ինչպես նաև դատարանների վարույթներում գտնվող, բայց դատաքննությունը չսկսված գոր-

2/6

ծերը, որոնց համար [illegible] սահմանվում է ազատազրկում մինչև երեք տարի ժամանակով [illegible] ազատազրկման հետ չկապված պատիժ, ինչպես նաև սույն որոշման 1-ին [illegible] ենթակետում թվարկված անձանց կատարած հանցագործությունների [illegible] գործերը, որոնց համար օրենքով սահմանվում է ազատազրկում [illegible] հինգ տարի ժամանակով։

3. Նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատել կիսով չափ՝

ա) մինչև հինգ տարի ժամանակով ազատազրկման դատապարտված ժամկետային ծառայության այն զինծառայողների նկատմամբ, ովքեր ազատազրկման վայրերում նախկինում պատիժ չեն կրել.

բ) հինգ տարուց ավելի ժամանակով ազատազրկման դատապարտված այն անձանց նկատմամբ, ովքեր՝

— Հայրենական մեծ պատերազմի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավասարեցված են նրանց, ունեն բռնադատվածի կարգավիճակ և դիտավորյալ հանցագործության կատարելու համար ազատազրկման ձևով նախկինում պատիժ չեն կրել,

— առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներ են,

— կանայք են կամ 60 տարին լրացած տղամարդիկ,

— հանցագործությունը կատարել են մինչև 18 տարեկան դառնալը և ազատազրկման վայրերում նախկինում պատիժ չեն կրել,

— դատապարտվել են անզգույշ հանցագործության կատարելու համար, բացի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 173 հոդվածի երրորդ մասով դատապարտվածներից և 260 հոդվածով դատապարտված այն անձանցից, որոնց արարքի հետևանքով առաջացել է մի քանի անձի մահ,

— Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ամուսին, զավակ, ծնող, քույր կամ եղբայր են.

գ) ազատազրկման դատապարտված այն անձանց նկատմամբ, ովքեր կրել են նշանակված պատժաչափի կեսը։

4. Նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատել՝

ա) մեկ երրորդով՝ ազատազրկման դատապարտված այն անձանց նկատմամբ, ովքեր կրել են նշանակված պատժաչափի մեկ երրորդ մասը.

բ) մեկ քառորդով՝ ազատազրկման դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնց վրա չեն տարածվում սույն որոշման 1-ին, 3-րդ կետերը և 4-րդ կետի «ա» ենթակետը։

5. Համաներումը չկիրառել՝

ա) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի $49^1$ հոդվածում թվարկված հանցագործությունները կատարած և նույն հոդվածում նշված անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի $73^1$ հոդվածի երկրորդ մասով, 82 հոդվածով, 86 հոդվածի երրորդ և չորրորդ մասերով, 87 հոդվածի երրորդ և չորրորդ մասերով, 88 հոդվածի առաջին մասով, 89 հոդվածի երրորդ և չորրորդ մասերով, 90 հոդվածի երրորդ և չորրորդ մասերով, 94 հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 112 հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերով, $112^1$, 115 հոդվածներով, 116 հոդվածի երկրորդ մասով, $119^2$, 133, $133^1$, $133^2$, 134, $134^1$, 185, $185^1$, 190 հոդվածներով, 203 հոդվածի երկ-

րորդ մասով, 229² հոդվածի երրորդ մասով, 232¹ հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 248 հոդվածի «բ» կետով, 257 հոդվածով, 259¹ հոդվածի «գ» և «դ» կետերով, 268 հոդվածի «բ» և «գ» կետերով նախատեսված հանցագործություններ կատարած կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, բացի այն դատապարտյալներից, ովքեր մինչև 1997 թվականի հունվարի 13-ը ազատազրկման վայրերից ազատվել են պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավմամբ։

բ) այն անձանց նկատմամբ, որոնց պատժաչափը կրճատվել է, կամ որոնց պատիժը կրելուց ազատվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրերով կամ 1990 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման առթիվ ամնիստիայի մասին», 1992 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձի առթիվ ամնիստիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 1995 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման կապակցությամբ համաներում հայտարարելու մասին», 1997 թվականի ապրիլի 30-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշումներով և կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն.

գ) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ.

դ) այն անձանց նկատմամբ, ովքեր խուսափել են ինչական զինվորական ծառայության հերթական զորակոչից, զորամասը կամ ծառայության վայրը թողել են ինքնագլուխ, և բացակայությունը տևել է մեկ ամսից ավելի (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 75 հոդված և 254 հոդվածի «գ» կետ), և սույն որոշման հրապարակման պահից երկու ամսվա ընթացքում չեն ներկայանա Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններ.

ե) այն անձանց նկատմամբ, ովքեր ազատազրկման վայրերում ռեժիմի չարամիտ խախտումներ թույլ տալու համար դատարանի որոշմամբ պատիժը կրում են բանտային ռեժիմում.

զ) մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի նախատեսվում.

է) այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են այլ պետությունների դատարանների կողմից։

6. Սույն որոշումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից, բացի աքսորից, արտաքսումից, ինչպես նաև գույքի բռնագրավումից, եթե բռնագրավումն ի կատար չի ածվել սույն որոշման հրապարակման պահին։

7. Ազատազրկման վայրերում խրոնիկական ալկոհոլիզմից, թմրամոլությունից կամ վեներական հիվանդություններից հարկադիր կարգով բուժվող անձանց նկատմամբ համաներումը կիրառվում է բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո։

Խրոնիկական ալկոհոլիզմով, թմրամոլությամբ կամ վեներական հիվանդություններով տառապող անձանց նկատմամբ, եթե նրանց վերաբերյալ գործերը չեն քննվել դատարաններում, համաներման կիրառումը հետաձգվում է մինչև դատարանում գործի քննության ավարտը։

8. Ազատազրկման վայրերում պատիժ կրող այն անձանց նկատմամբ,

...կիրառվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ... գործող, սակայն մինչև սույն որոշման ... Հայաստանի Հանրապետության օրենքներում վերացված հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար և պատիժ են կրում ... համար սահմանված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նոր հոդվածներին համապատասխան, սույն որոշումը կիրառվում է ըստ ներկայումս գործող հոդվածների։

9. Սույն որոշման կատարումը դնել՝

ա) դատարանների վրա՝

— այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը կամ նյութերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել,

— պայմանական դատապարտված անձանց կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ դատավճիռների կատարումը հետաձգվել է, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ,

— այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են ազատազրկման հետ չկապված պատիժների, բացի ուղղիչ աշխատանքների դատապարտվածներից.

բ) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վրա՝

— այն անձանց նկատմամբ, ովքեր պատիժը կրում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս.

գ) հետաքննության և նախաքննության մարմինների վրա՝

— այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը և նյութերը քննում են վերոհիշյալ մարմինները.

դ) ուղղիչ աշխատանքային հիմնարկների պետերի վրա՝

— այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր պատիժը կրում են ազատազրկման վայրերում.

ե) ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ներքին գործերի տարածքային մարմինների պետերի վրա՝

— այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են ուղղիչ աշխատանքների,

— այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են ազատազրկման պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավմամբ կամ ազատազրկման վայրերից ազատվել են պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավմամբ.

զ) կարգապահական գումարտակի հրամանատարի վրա՝

— այն անձանց նկատմամբ, ովքեր պատիժը կրում են կարգապահական գումարտակում։

10. Համաներում կիրառելու վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների, ուղղիչ աշխատանքային հիմնարկների պետերի, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ներքին գործերի տարածքային մարմինների պետերի և կարգապահական գումարտակի հրամանատարի ընդունած որոշումները պետք է հաստատի դատախազը։

Համաներման մասին որոշումը դատարանի կողմից կիրառելու դեպքում դատախազի մասնակցությունը պարտադիր է։

11. Սույն որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր հան-

5/6

ցագործություն են կատարել մինչև 1998 թվականի սեպտեմբերի 14-ը ներառյալ։

12. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը կիրառվում են այն անձանց նկատմամբ, ովքեր առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներ են ճանաչվել մինչև սույն որոշումն ընդունելու նախորդ օրը ներառյալ, կամ որոնց 60 տարին լրանում է մինչև սույն որոշման կատարման ժամկետի ավարտման օրը ներառյալ։

13. Համաներման կիրառումը չի վերացնում դատվածությունը։

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա է կատարման մինչև 1998 թվականի դեկտեմբերի 14-ը։

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ

Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 սեպտեմբերի 1998 թ.
Ն—238—1
քաղ. Երևան